

MARSELA SARGSYAN

3<sup>rd</sup> year Bachelor, Department of Financial Accounting

**OPPORTUNITIES AND OBSTACLES TO WOMEN'S ENTREPRENEURSHIP IN ARMENIA**

**Keywords:** women's entrepreneurship, family and business, motivation, obstacles

*In this article, women's entrepreneurship in Armenia is studied, taking into account the possibilities of entrepreneurial activity for women entrepreneurs who are physical or legal entities in Armenia and the obstacles faced during their activity.*

*The article revealed the use of women's potential in Armenian entrepreneurship, which is closely related to the Armenian mentality, inclusion of financial resources, awareness, women's education, family concerns, etc.*

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիապ, 3-րդ կուրս

**ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Հիմնաբառեր.** աղքատություն, տնտեսական աճ, Զինիի գործակից, խորություն, սրություն, անհավասարություն, ՀՆԱ

Սույն հոդվածում ներկայացրել ենք աղքատության բնորոշումը, օր օրի վաղա-րացող աղքատության պատկերն ու փորձել գտնել դրա վրա ազդող գործոնները: Հե-տազոտության ընթացքում հանդիպեցինք հետևյալ խնդիրներին՝ մեկ շնչի հաշվով դրամական եկամուտներն ու սպառողական ծախսերն աճում են ոչ համամասնորեն, աղքատության խորությունն ու սրությունը աճում են, որին զուգահեռ մեծանում է եկա-մուտների ու սպառման անհավասարությունը ներկայացնող Զինիի գործակիցը: Ինչ-պես նաև, վերջին տարիներին մեծանում է «աղքատության մեջ հայտնվելու ռիսկի շեմ» համարվող հարաբերական աղքատության մակարդակը, և քանի որ գնաճի ազ-դեցությունը աղքատության մակարդակի վրա մեծ է, փոփոխվում են աղքատության միջազգային գծերը, ինչը մեծացնում է աղքատության մակարդակը:

Առկա անհավասարությունը որպես աղքատության կրճատման մեծագույն խոչ-ընդոտ համարելով՝ կարծում ենք, որ առաջնահերթ պետք է վերանայել անհավասա-րության վերացման ուղղած ծրագրերն ու միջոցառումները:

**Ներածություն:** Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնա-հատման կարևոր քանակական ցուցանիշ է տվյալ երկրում աղքատության մակարդակը: Այն շոշափում է կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, առողջու-թյուն, կրթություն, իրավունքներ՝ ներառյալ ծայնի, անվտանգության, արժա-նապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Աղքատությու-նը երկրի դժվարագույն վիճակն է, որը տարբեր ժամանակներում ու երկրնե-րում ունեցել է տարբեր բնութագրումներ: Այն արտահայտում է եկամուտնե-րի, սպառման և ծախսերի ցածր մակարդակը, սոցիալական ծառայություննե-րի ցածր մատչելիությունը՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվա-

զագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորությունները, անվտանգության, ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճանը:

Աղքատության խնդիրների վրա միջազգային ուշադրության կենտրոնացումը բարձրացել է հատկապես 1990-ական թթ. և 2000 թ. ընդունված ՄԱԿ-ի հազարամյակների զարգացման հռչակագրով (MDGs), որով աղքատության կրճատումը սահմանվեց ՄԱԿ-ի առաջնահերթություններից մեկը: 1994 թվականից այդ խնդրով զբաղվում է նաև Համաշխարհային բանկը, որի հիմնական նպատակը հենց ծայրահեղ աղքատության վերացումն ու երկրների բարգավաճմանը նպաստելն է:

Աղքատությունն ուշադրության կենտրոնում պահելը առավել քան անհրաժեշտ է, ինչի մասին փաստում են վիճակագրական տվյալները (2018-2020 թթ. այն համապատասխանաբար կազմել է 34.4, 29.9 և 25.2%):

**Գրականության ակնարկ:** Խնդրի կարևորությունից ելնելով՝ բազմաթիվ կազմակերպություններ և հեղինակներ ուսումնասիրել են աղքատությունը, մշակել մոդելներ: Աղասի Թադևոսյանը կարծում է, որ ՀՀ Կառավարությունը մեծ սխալ կատարեց, երբ հասարակական հարաբերությունները դիտարկեց որպես տնտեսականի և քաղաքականի նկատմամբ ստորադաս, այն դեպքում, երբ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական հարաբերություններն ածանցվել են հասարակական հարաբերություններից, և դրանց հիմքում հասարակական հարաբերությունները կարգավորող օրենքներն են: Հայաստանը սոցիալական բազայի տեսանկյունից բավականին նպաստավոր պայմաններ ուներ անցումային շրջանը առանց խոր ցնցումների անցնելու: Այդ շրջանում հաջողություն ունենալու համար առաջնահերթություն պետք է լիներ միջին խավի ձևավորումն ու վերարտադրությունը: Խոսքը հասարակական հարաբերություններում ինքնուրույն գործառույթային դեր կրող միջին խավի մասին է, իսկ Հայաստանի բնակչությունը խորհրդային պետության փլուզման տարիներին ուներ միջին խավի հատկանիշներ: Իշխանության կողմից միջին խավի պոտենցիալ ունեցող բնակչության վերարտադրության և ակտիվության դրսևորման նպաստավոր պայմանների ձևավորումը կարևոր գործոն կարող էր դառնալ: Այս հիմնական ուղին թույլ կտար պահպանել հասարակական ակտիվությունը: Սակայն, վերնախավը հասարակական հարաբերությունները մատնեց անտարբերության և կարևորություն տվեց տնտեսական ոլորտում սահմանափակ թվաքանակի սուբյեկտների ձեռքում կապիտալի խոշոր կուտակումների տանող քաղաքականությանը<sup>1</sup>:

«ՀՀ տարածքային անհամաչափության գնահատում և վերլուծություն» հոդվածում նշվում է, որ ՀՀ տարածքում անհամաչափությունը մեծ է Երևան քաղաքի և մարզերի միջև, այդ իսկ պատճառով կարևորվում են մասնավոր դրամական փոխանցումները և համահարթեցման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների մեծացումը, որոնք կնպաստեն թույլ զարգացած տարածքների զարգացմանը և աստիճանաբար մոտեցմանը միջին հանրապետական մակարդակին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Թադևոսյան**, Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2002, էջ 7-9:

<sup>2</sup> Տե՛ս **Մ. Մովսիսյան, Ծ. Կարապետյան, Թ. Օհանյան, Ա. Մինասյան**, ՀՀ տարածքային անհամաչափության գնահատում և վերլուծություն, Բանբեր ՀՊՏՀ, 2022, 4, էջ 59:

«ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա» հոդվածում նշվում է, որ մեր օրերում ձեռնարկատիրության զարգացման խնդիրները հուզում են ոչ միայն պետական մարմիններին, այլ նաև հասարակության բոլոր անդամներին, քանի որ հենց ձեռնարկատիրության զարգացմամբ է հնարավոր հասնել տնտեսության աշխուժացման, գործազրկության կրճատման, որոնք հասարակության բարեկեցության բարելավման նախապայմաններն են: Ոլորտի զարգացմանը զուգընթաց կկրճատվի երկրում աղքատության մակարդակը: Ի թիվս աղքատության, գործազրկության կրճատման բազմաթիվ ուղիների, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը ամենաարդյունավետն է և ամենաարագը: ՀՀ մարզերում աշխատաշուկան ոչ համաչափ է զարգացած: Ակնհայտ է, որ զբաղվածության՝ ձևավորված մարզային կառուցվածքն արդյունավետ չէ, քանի որ մարզերի և մայրաքաղաքի միջև կենսամակարդակի զգալի տարբերությունների պայմաններում ռեզերվներ են ստեղծվում սեզոնային գործազրկության, երիտասարդ աշխատուժի՝ դեպի մայրաքաղաք վերաբաշխման համար<sup>1</sup>:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության ընթացքում աղքատության մակարդակը գնահատելիս հիմնվել ենք սպառմանն ուղղված ծախսերի վրա. եկամտի բացակայությունը դեռևս չի նշանակում բարեկեցության զրոյական մակարդակ: Միջին եկամուտ ունեցող երկրներում, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը, աղքատները եկամուտ ստանում են նաև գործունեության բազմաթիվ կարճաժամկետ տեսակներից, որոնք չեն արտացոլվում եկամուտներին վերաբերող տվյալներում: Նման հանգամանքներում բարեկեցությունը գնահատվում է ոչ թե տնային տնտեսությունների գործունեության բոլոր տեսակներից ստացվող եկամուտների ճշգրիտ հաշվարկի, այլ սպառմանն ուղղված ծախսերի հիման վրա: Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը մշակված է Համաշխարհային բանկի կողմից: Մինչև 2019 թվականը ՀՀ-ում աղքատության տարեկան գնահատումը հիմնված է եղել տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունների համեմատ աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) կիրառությամբ: Այնուհետև փոփոխվել են աղքատության գծերի հաշվարկման հիմքերը: Այժմ աղքատության գնահատումն իրականացվում է *հիմնական կարիքների արժեքի* (ՀԿԱ) մեթոդի հիման վրա: Հիմնական կարիքների արժեքն այն գումարն է, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Այս դրամական արժեքը կոչվում է «աղքատության գիծ»: Եթե տնային տնտեսությունը, որի սպառումն այդ զամբյուղի արժեքից ցածր է, գտնվում է աղքատության գծից ներքև, համարվում է աղքատ: Այդ աղքատության գիծը դրամական արտահայտությամբ ներկայացնում է ապրանքների (պարենային և ոչ պարենային) և ծառայությունների արժեքը, որն արտացոլում է տվյալ երկրում կենսամակարդակի նվազագույն մակարդակը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա, «Ամբերդ» մատենաշար 31, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2016, էջ 7:

<sup>2</sup> <https://www.armstat.am/file/doc/99520813.pdf> (22.02.2023)

Հետազոտման արդյունքում կիրառել ենք համեմատում, գտել ենք ՀՆԱ-ի աճ-աղքատության մակարդակ կապը, գնաճի և եկամուտների փոխկապվածությունը:

**Վերլուծություն:** Ուսումնասիրենք աշխարհում աղքատության շարժընթացը՝ սկսած 1990 թվականից: 1990-2013 թթ. աղքատության համաշխարհային մակարդակը նվազել է՝ 37,8%-ից հասնելով 11,7%-ի (ծայրահեղ աղքատությունը ավելի քան մեկ միլիարդ մարդով պակասել է): Այնուհետև արձանագրվել է աղքատության կտրուկ կրճատում. 2008-2013 թթ. աղքատության մակարդակը նվազել է տարեկան 1,4 տոկոսային կետով կամ տարեկան 86 միլիոն մարդով: 1990 թվականից սկսած՝ 2014-ից 2019 թվականների ընթացքում է, որ ծայրահեղ աղքատությունն ամենից դանդաղել է կրճատվել. տարեկան ընդամենը 0,6 տոկոսային կետ կամ տարեկան 33 միլիոն մարդ:

2020 թ. ընթացքում տեղի ունեցավ վերջին տասնամյակների համաշխարհային աղքատության ամենամեծ աճը: Համաճարակի ընթացքում գրանցվել են աշխատատեղերի ու եկամուտների զգալի կորուստներ, ինչպես նաև մեծացել է անհավասարությունը: Ծայրահեղ աղքատության մեջ ապրողների թիվն ավելացել է 11%-ով՝ 71 միլիոն մարդով, ինչը 1.2 տոկոսային կետով բարձր էր կանխատեսվածից: Համաշխարհային աղքատության վերջին աճը տեղի էր ունեցել Ասիական ֆինանսական ճգնաժամի ընթացքում՝ 37 մլն մարդով: Իսկ COVID 19-ի պատճառով վնասը 4 անգամ գերազանցում է այն: 2020-ից աղքատության կրճատման գործընթացը դանդաղել է: Աղքատության կրճատումը վերսկսվել է 2021 թ., բայց ոչ այնքան արագ, որ հնարավոր լիներ վերականգնել 2020 թ. հետևանքները: 2020 թ. էական ցնցումը և դրանից հետո կորուստների թույլ վերականգնումը չորս տարով հետաձգել են առաջընթացը: COVID 19-ի հետևանքով, միջին հաշվով, ծայրահեղ աղքատության մեջ ապրող յուրաքանչյուր մարդ օրական 30%-ով պակաս եկամուտ ունի, քան նախկինում: Ըստ մինչ համաճարակը Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ ծայրահեղ աղքատության մակարդակը պետք է կրճատվեր մինչև 2030 թվականը<sup>1</sup>:

ՀՀ-ում աղքատության մակարդակը գնահատելուց առաջ փորձենք հասկանալ դրա առաջացման պատճառները: Հիմնական պատճառները, ըստ էության, համակարգային արագընթաց փոփոխություններն էին: Երկիրը վարչապարամայականից կտրուկ անցում կատարեց շուկայական տնտեսության՝ առանց ուսումնասիրելու աստիճանական ներդրման գաղափարը, պետական սեփականության նկատմամբ չարաշահումների դրսևորումները: Աղքատության մակարդակն ավելի բարձրացավ Արցախյան պատերազմից, Սպիտակի երկրաշարժից, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: 1990-ական թվականներին երկրում տիրում էր աղքատություն: Համաշխարհային բանկն այդ առիթով արձանագրում է՝ «...կենսամակարդակի կտրուկ անկում, զանգվածային գործազրկություն, բնակչության մեծամասնության աղքատացում, սոցիալական բևեռացում»<sup>2</sup>: ՀՀ Կառավարությունը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, 2003 թ. հաստատում է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»<sup>3</sup>:

<sup>1</sup> <https://www.worldbank.org/en/publication/poverty-and-shared-prosperity> (06.02.2023)

<sup>2</sup> «Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1999:

<sup>3</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44725> (13.02.2023)

## Աղյուսակ 1

**Տնային տնտեսությունների սպառման և եկամուտների միջինը մեկ շնչի հաշվով**

|                                                   | 2016          | 2017          | 2018          | 2019                |
|---------------------------------------------------|---------------|---------------|---------------|---------------------|
| <b>Դրամական եկամուտները, ընդամենը, այդ թվում՝</b> | <b>56 544</b> | <b>58 474</b> | <b>61 047</b> | <b>61 076</b>       |
| աշխատանքային եկամուտներ                           | 36 993        | 37 773        | 39 165        | 37 733              |
| սոցիալական տրանսֆերտներ                           | 9 569         | 9 932         | 9 945         | 10 046              |
| եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից               | 2 955         | 3 491         | 4 509         | 5 125               |
| այլ դրամական մուտքեր                              | 7 027         | 7 278         | 7 428         | 8 172               |
| <b>Սպառողական ծախսեր, այդ թվում՝</b>              | <b>43 978</b> | <b>44 413</b> | <b>45 788</b> | <b>47 324</b>       |
| պարենային ապրանքների վրա                          | 20 115        | 20 416        | 20 471        | 20 955              |
| ոչ պարենային ապրանքների վրա                       | 8 732         | 8 497         | 8 644         | 11 327              |
| ծառայությունների վրա                              | 15 131        | 15 500        | 16 673        | 15 042 <sup>1</sup> |

2019 թ. եկամուտները գրեթե չեն փոփոխվել, սակայն հատկանշականն այն է, որ նվազել են աշխատանքային եկամուտները: Իսկ ծախսերը, 2018 թ. համեմատ, բարձրացել են 3.4%-ով, սակայն սա չի կարող փաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին<sup>2</sup>:

ՀՀ-ում աղքատության մակարդակի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել աղքատության խորությունն ու սրությունը: Աղքատության խորությունը ցույց է տալիս, թե աղքատների միջին սպառումը որքանով է ցածր աղքատության գծից: Աղքատության սրությունն արտացոլում է աղքատների միջև սպառման անհավասարությունը, ինչպես նաև այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներին՝ շատ մոտ<sup>3</sup>:

2020 թ. աղքատության խորությունը կազմել է 4.7%, այն ցույց է տալիս, որ աղքատների միջին եկամուտը 4.7%-ով ցածր է աղքատության գծից. եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) հավաքագրելու աղքատության գծի 4.7%-ին համարժեք ռեսուրսներ, և այդ ռեսուրսները հատկացվեին միայն աղքատ տնային տնտեսություններին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար՝ ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է հասցեատերերին: 2020 թ. աղքատության սրությունը կազմել է 1.3%<sup>4</sup>:

Աղքատության մակարդակի էական տարբերությունները մարզերում, գյուղում ու քաղաքում պահպանվում են և նույնիսկ՝ խորանում: Հայաստանում աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը, թե՛ նախաճգնաժամային ժամանակահատվածում և թե՛ դրանից հետո, առավել տարածված են փոքր ու միջին քաղաքային բնակավայրերում (բոլոր քաղաքային բնակավայրերը՝ առանց Երևանի)<sup>5</sup>:


<sup>1</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

<sup>2</sup> [https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes\\_report\\_final.pdf](https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf) (14.03.2023)

<sup>3</sup> [https://www.armstat.am/file/article/poverty\\_2020\\_a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2020_a_2.pdf) (08.03.2023)


<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը (2020 թ. տնային տնտեսությունների և կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները), Եր., 30 նոյեմբերի, 2021 թ.:

<sup>5</sup> [https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes\\_report\\_final.pdf](https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf) (14.03.2023)



**Գծապատկեր 1. Աղքատության սրության և խորության մակարդակը ՀՀ-ում 2020-2021 թթ.<sup>1</sup>**

Այժմ հասկանանք, թե հատկապես ինչ գործոններ են ազդել երկրում աղքատության մակարդակի բարձրացման և մասնավորապես անհավասարության մեծացման վրա: Գծապատկեր 3-ում արտահայտված է ՀՆԱ-ի և աղքատության միջև գոյություն ունեցող կապը: Ներկայացված են 2009-2022 թթ. ՀՆԱ-ի աճի և աղքատության կապը: Ամենագրավիչ ու արդյունավետ պատկերն ունեցել ենք 2016 թ.՝ ՀՆԱ-ի 0,2 տոկոսային կետով աճը նպաստել է աղքատության 4,3 տոկոսային կետով նվազման՝ աղքատության մակարդակը հասցնելով 42,4%-ի: 2017-2019 թվականներից, կարծես, հակառակ պատկերն է ձևավորվել. ՀՆԱ-ի 5-7,5% աճի արդյունքում աղքատությունն աճել է 3,4-6,3%-ով: 2020 թ. ՀՆԱ-ն 7,2%-ով նվազել է, իսկ աղքատությունը՝ աճել 1,2-ով: ՀՆԱ-ի ազդեցությունն աղքատության մակարդակի վրա ակնհայտ է, սակայն միանշանակ պնդել, որ ՀՆԱ-ի աճի և աղքատության միջև գոյություն ունի ուղիղ կամ հակադարձ կապ, այդքան էլ ճիշտ չէ, քան որ, բացի ՀՆԱ-ից, ազդում են բազմաթիվ այլ գործոններ:




**Գծապատկեր 2. ՀՆԱ-ի աճն ու աղքատության մակարդակը ՀՀ-ում 2009-2021 թթ.<sup>2</sup>**

Դիտարկենք նաև գնաճի կապը միջին ամսական անվանական եկամուտների հետ: 2016 թ. գնանկումը հանգեցրել է անվանական աշխատավարձի աճի: 2018 թ. 102.5% գնաճը միջին ամսական անվանական եկամուտ-

<sup>1</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:  
<sup>2</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ <https://www.macrotrends.net>, <https://www.adb.org/> (23.02.2023)

ները նվազեցրել է 2.87 տոկոսային կետով: Հաճախ նշում ենք, որ նպատակային մակարդակի գնաճը դրական երևույթ է, սակայն պետք է նկատել, որ այն մեծ ազդեցություն է ունենում առկա անհավասարության մեծացման և միջին ամսական անվանական եկամուտների վրա:



**Գծապատկեր 3. Գնաճն ու անվանական աշխատավարձի աճը ՀՀ-ում, 2016-2021 թթ.<sup>1</sup>**

Անվանական աշխատավարձը միջինում աճել է 4.5%-ով: Սա պայմանավորված է պետական հատվածի աշխատավարձերով: Կոնկրետ մասնավոր հատվածում 2016-2020 թթ. միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.0, 3.8, 3.0%-ով: Իսկ եթե այն համեմատենք առաջին անհրաժեշտության ապրանքների գների զգալի աճի հետ, ապա աշխատավարձի աճը չի կարող համարվել էական:

2008-2009 թթ. գլոբալ ֆինանսական ճգնաժամին հաջորդած աղքատության կտրուկ աճից հետո 2010 թվականից սկսեց այն նվազել, 2018-ին կազմեց 23,5%: 2019 թ. նոր մեթոդաբանության արդյունքում այն գնահատվեց 52,3%: Վերլուծությունները ցույց են տալիս, որ եկամտի հիմնական գործոններն են աշխատավարձն ու գյուղատնտեսությունից ստացված արդյունքները, և աշխատուժի ցածր շարժունակության, դանդաղ կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աղքատության կրճատում գրեթե տեղի չի ունեցել:

Երևանից դուրս գտնվող քաղաքներն ու գյուղերը շարունակում են հետ մնալ: Անհավասարությունն աճում է 2013-2018 թթ., երբ բնակչության 40%-ի սպառումը գրեթե չի աճում: COVID-19 համավարակը, Ադրբեյջանի հետ զինված հակամարտությունը խորացրին առկա անհավասարությունը: Աղքատության մակարդակը ՀՀ-ում համարվում է միջինից բարձր<sup>2</sup>:

## Աղյուսակ 2

**Աղքատության գծերը ՀՀ-ում, 2019-2021 թթ.**

|      | Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ | Աղքատության ստորին գիծ | Աղքատության վերին գիծ |
|------|----------------------------------------|------------------------|-----------------------|
| 2019 | 23 763                                 | 35 054                 | 53 043                |
| 2020 | 23 828                                 | 35 324                 | 53 641                |
| 2021 | 26 500                                 | 38 548                 | 57 744                |


2019 թվականից սկսած՝ ՀՀ-ում հաշվարկվում է աղքատության չորս տարբեր գիծ. ա) պարենային (ծայրահեղ) աղքատության գիծ, բ) աղքատու-

<sup>1</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

<sup>2</sup> povertydata.worldbank.org


թյան ստորին գիծ, գ) աղքատության վերին գիծ, դ) աղքատության միջին գիծ, որն աղքատության ստորին և վերին գծերի միջինն է (աղյուսակ 2):

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, եկամուտների և սպառման ցուցանիշների անհավասարությունը 2020 թ. նվազել է: Նշենք, որ Ջինիի գործակիցը տատանվում է 0-1 միջակայքում: Ինչքան այն մոտ է 0-ին, այնքան հավասար են տնային տնտեսությունների եկամուտները: 1-ին մոտ լինելու պարագայում ամբողջ եկամուտը ստանում են մի քանի տնային տնտեսություններ:



**Գծապատկեր 4. Ջինիի գործակիցը ՀՀ-ում, 2019-2021 թթ.**

Ըստ եկամուտների անհավասարությունը նվազել է 0.04 անգամ, իսկ ըստ սպառման անհավասարությունը՝ 0.2: Ըստ ցուցանիշների՝ Հայաստանում բնակչության բևեռացումը, ըստ եկամուտների ցուցանիշի, ավելի խորն է, քան ըստ սպառման ագրեգատի ցուցանիշի: 2020-2021 թթ. Ջինիի գործակիցն աճել է, ինչը նշանակում է, որ համավարակի հետևանքով եկամուտների և սպառման անհավասարության աճ է տեղի ունեցել:



**Գծապատկեր 5. Հարաբերական աղքատության մակարդակը ՀՀ-ում, 2015-2021 թթ.<sup>1</sup>**


Բացի այս ցուցանիշներից, պետք է դիտարկել նաև հարաբերական աղքատությունը: Ըստ հարաբերական աղքատության՝ եկամտի մեղիանի 60%-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները համարվում են աղքատ: Հարաբերական աղքատության գաղափարը հատկապես տարածված է Եվրոպական միության երկրներում և հենվում է այն ենթադրության վրա, որ աղքատությունը ոչ թե հիմնական կարիքները բավարարելու հնարավորությունն է, այլ որոշ խմբերի՝ բնակչության ընդհանուր կենսամակարդա-

<sup>1</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ [https://www.armstat.am/file/article/poverty\\_2020\\_a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2020_a_2.pdf) (21.02.2023)



կին գիշերը: Աղքատության հարաբերական գիծը հաշվարկվում է տնային տնտեսությունների տարեկան մեդիանի եկամտի որոշակի տոկոսային մասի տեսքով: Եկամտի մեդիանի 60%-ի շեմը համարվում է «աղքատության մեջ հայտնվելու ռիսկի շեմ»<sup>1</sup>:

2022 թ. աշնանը Համաշխարհային բանկն ընդունել է ըստ գնողունակության համարժեքության աղքատության միջազգային գծերի նոր շեմեր: Այս փոփոխության համաձայն՝ ցածր եկամուտ ունեցող երկրների համար աղքատության միջազգային գիծը 1.90 ԱՄՆ դոլարից դարձել է 2.15 ԱՄՆ դոլար<sup>2</sup>:



**Գծապատկեր 6. Աղքատության միջազգային գիծը ցածր, միջին և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում, 2018-2021 թթ.<sup>3</sup>**

Նշենք նաև, որ աղքատության գիծը նախատեսված է ծայրահեղ աղքատությունը գնահատելու համար: Սա նշանակում է, որ 2,15 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող անձինք համարվում են ծայրահեղ աղքատ: Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների համար 3.20 ԱՄՆ դոլարից այն դարձել է 3.65 ԱՄՆ դոլար, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար (օրինակ՝ Հայաստանի)՝ 5.50 ԱՄՆ դոլարից 6.85 ԱՄՆ դոլար: Այսպիսով, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում բնակվող անձը, որն ուներ օրական 5.50 ԱՄՆ դոլարից ավելի եկամուտ, չէր համարվում աղքատ, սակայն այս փոփոխության արդյունքում այդ շեմը բարձրացվել է: Սա հատկապես տեղի ունեցող գնաճի հետևանք է, և եթե անձը մինչ այս գնաճը կարողանում էր այդ գումարով հոգալ կենսական նշանակության կարիքները, ապա գնաճի պայմաններում դա անհնար է<sup>4</sup>:

**Եզրակացություն:** Այսպիսով, կատարված հետազոտության հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. աղքատությունը վեր է ածվել համատարած երևույթի:
2. Խորանում է բևեռացումը ունևորների և աղքատների միջև:

<sup>1</sup> [https://www.armstat.am/file/article/poverty\\_2020\\_a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2020_a_2.pdf) (20.02.2023)

<sup>2</sup> <https://data.worldbank.org/>

<sup>3</sup> Մշակել է հեղինակը, աղբյուրը՝ <https://www.worldbank.org/en/news/factsheet/2022/05/02/factsheet-an-adjustment-to-global-poverty-lines>, [https://data.worldbank.org/indicator/SI.POV.LMIC.GP?fbclid=IwAR1z0x3I4TfmbRhFQq6dXarOhRI5HUH0IV\\_VKL8Su3W-Tn0WnwM7eWCR5z4](https://data.worldbank.org/indicator/SI.POV.LMIC.GP?fbclid=IwAR1z0x3I4TfmbRhFQq6dXarOhRI5HUH0IV_VKL8Su3W-Tn0WnwM7eWCR5z4), [https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC.GP?fbclid=IwAR1z0x3I4TfmbRhFQq6dXarOhRI5HUH0IV\\_VKL8Su3W-Tn0WnwM7eWCR5z4&locations=XT](https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC.GP?fbclid=IwAR1z0x3I4TfmbRhFQq6dXarOhRI5HUH0IV_VKL8Su3W-Tn0WnwM7eWCR5z4&locations=XT) (11.03.2023)

<sup>4</sup> <https://www.armstat.am/file/doc/99534268.pdf> (11.03.2023)

3. Կրթության որակի և մատչելիության անկում է տեղի ունենում:
4. Բնակչության մեծ մասը զրկված է իր ունակություններն ու կարողությունները զարգացնելու հնարավորությունից:
5. Անվանական աշխատավարձը աճում է միայն պետական աշխատողների շրջանում:

Նախ՝ սկսենք նրանից, որ գործողությունների *առաջին փուլը* պետք է լինի մարդկային կապիտալի զարգացումը, կրթության կատարելագործումը և այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք հնարավորություն կտան կրթությամբ ապահովելու ցանկացած խավի քաղաքացու, և որևէ անձ, սոցիալական խնդիրներից ելնելով, չպետք է զրկվի կրթության հնարավորությունից: Աղքատությունը, ըստ կրթության մակարդակի, կազմում է 25.3%: Պետությունը պետք է այս 25.3% բնակչին ապահովի անվճար կրթությամբ. խոսքը ոչ միայն տարրական, այլև բարձրագույն կրթության մասին է:

Այսպիսով.

- Պետք է բավարար միջոցներ ներդրվեն հատկապես մարզերում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ և «Թումո» կենտրոններ, տուփեր բացելու համար: Դրանք անվճար կրթություն են ապահովում արվեստի, տեխնոլոգիաների ոլորտում:
- Սոցիալական աշխատակիցների կողմից պետք է անցկացվեն հանդիպումներ աղքատ երեխաների հետ, նրանց ներկայացվեն կրթության անհրաժեշտությունը, մասնագիտություն ձեռք բերելու կարևորությունը:

*Երկրորդ փուլով* պետք է արմատական փոփոխություններ կատարվեն առողջապահական քաղաքականությունում.

- բարձրացնել անվճար մատուցվող առողջապահական ծառայությունների որակը, քանի որ հայտնի է, որ անվճար հիմունքներով այժմ անհնար է ստանալ որակյալ բուժում: Իսկ աղքատները ունեն որակյալ ծառայություններից օգտվելու հավասար իրավունք:
- Փոփոխել աշխատակիցների՝ աղքատների հանդեպ ունեցած վերաբերմունքը և չկիրառել որևէ խտրականություն:

*Երրորդ* ուղղությամբ պետք է բարելավել և վերանայել աղքատներին տրամադրվող անվճար սնունդը:

*Չորրորդ՝* անհավասարության հաղթահարում: Աղքատության մակարդակը կարող է կրճատվել, եթե եկամուտները երկրում բաշխվեն արդյունավետորեն: Քանի որ ՀՀ-ում յուրաքանչյուր 3 բնակչից մեկն աղքատ է, ապա այս խնդրի լուծումը շատ կարևոր է: Հանրապետությունում անհավասարությունն ակնհայտ է մարզերի և Երևան քաղաքի միջև: Բացի դրանից, անվանական դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով դիտարկելիս պարզվում է, որ եկամուտների բարձրացման դեպքում գերազանցապես շահում են հարուստները, և բնակչության 20-30%-ի համար այդ աճը գրեթե աննշան է: Եվ արդյունքում հարուստներն ավելի են հարստանում:

Պետք է նշել, որ հանրային հատվածից բացի, մասնավոր հատվածը ևս ունի տնտեսության զարգացման խթանման մեծ ներուժ, և պետք է փոքր բիզնեսին աջակցելն ու օժանդակելը լինի անհավասարության հաղթահարման գլխավոր գործիք: Քանի որ մասնավոր հատվածի աշխուժացումը մեծապես կատարվում է ներգրավված վարկերի հաշվին, այդ իսկ պատճառով պետք է

հետևել դրանց նպատակային օգտագործմանը, ինչպես նաև բիզնեսի կա-  
յացման գործում անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել և հարկային  
արտոնություններ կիրառել:

ՓՄՁ-ների զարգացումը միջին խավի ձևավորման կարևոր գործոն է:  
Նախորդ տարիներին փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քա-  
ղաքականությունն ուղղված է եղել ՓՄՁ սուբյեկտների քանակական աճին և  
ռեսուրսների հասանելիությանը, հետևաբար շեշտը պետք է դրվի գիտելիքի,  
որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձ-  
րացման, ոլորտի խթանման համար հիմնական սկզբունքների ներկայաց-  
ման, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկ-  
խոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարու-  
թյունների խթանման վրա: Հարկային արտոնություններից առավել նպատա-  
կահարմար կլինի կիրառել հարկային արձակուրդներ, որը, օրենքով սահ-  
մանված կարգով և ժամանակահատվածում, հարկային ռեզիդենտներին  
որոշակի հարկատեսակներից ազատում է: Սակայն, սա շատ դեպքերում  
քննադատության է արժանանում, քանի որ սահմանափակ օգուտ է ապահո-  
վում երկրի տնտեսության համար: Կարծում ենք, որ հարկային արտոնության  
երկրորդ առավել արդյունավետ եղանակը ՓՄՁ-ներին ներդրումային հար-  
կային վարկեր տրամադրելն է, ինչը հնարավորություն կտա հարկատուին  
որոշակի հարկատեսակների գծով հարկերի ընթացիկ վճարումների կրճատ-  
ման՝ հետագայում հարկային վարկի և դրա տոկոսների վճարման պայմանով:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 30 նոյեմբերի, 2021 թ.:
2. Մկրտչյան Մ., Մարգարյան Լ., Բնակչության եկամուտների ձևավորումը,  
բաշխումը և վերաբաշխումը», Եր., Տնտեսագետ, 2007:
3. Մովսիսյան Մ., Կարապետյան Ծ., Օհանյան Թ., Մինասյան Ա., ՀՀ տարածքային  
անհամաչափության գնահատում և վերլուծություն, Բանբեր ՀՊՏՀ, 2022, 4:
4. Թադևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման  
ու ամրապնդման դիտանկյունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր.,  
2002:
5. ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատու-  
թյան կրճատման վրա, «Ամբերդ» մատենաշար 31, Եր., «Տնտեսագետ» հրատ.,  
2016:
6. Գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությանը ՀՀ-ում, «Ամբերդ»  
մատենաշար 9, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014:
7. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1999:
8. <https://www.armstat.am>
9. <https://www.worldbank.org>
10. <https://www.luys.am/>
11. <https://www.unicef.org/>
12. <https://womennet.am/>
13. <https://www.arlis.am/>
14. [povertydata.worldbank.org](https://povertydata.worldbank.org)
15. <https://www.adb.org/>
16. <https://www.macrotrends.net/>
17. <https://minfin.am>
18. <https://www.luys.am/>

АМАЛЯ САРИБЕКЯН

Финансы, бакалавриат, 3-й курс

**ПРОБЛЕМЫ БЕДНОСТИ В РА**

**Ключевые слова:** бедность, экономический рост, коэффициент Джини, глубина, выраженность, неравенство, ВВП

*В этой статье мы представили определение бедности, ухудшающийся день ото дня образ бедности и попытались найти факторы, влияющие на нее. В ходе исследования мы столкнулись со следующими проблемами: денежные доходы и потребительские расходы на душу населения растут непропорционально, увеличивается глубина и острота бедности, увеличивается коэффициент Джини, отражающий неравенство доходов и потребления. В последние годы повышается также уровень относительной бедности, который рассматривается как порог риска попадания в бедность, а так как влияние инфляции на уровень бедности велико, меняются международные черты бедности, что повышает уровень бедности.*

*Считая существующее неравенство самым большим препятствием на пути сокращения бедности, мы считаем, что в первую очередь следует пересмотреть программы и меры, направленные на ликвидацию неравенства.*

AMALYA SARIBEKYAN

3<sup>rd</sup> year Bachelor, Department of Finance**THE ISSUES OF POVERTY IN RA**

**Keywords:** poverty, economic growth, Gini coefficient, depth, intensity, inequality, GDP

*This article presents the definition of poverty, the image of poverty that is getting worse day by day and an attempt was made to find the affecting factors of it. During the research, we encountered the following problems: monetary incomes and consumer spending on a person disproportionately, the depth and severity of poverty is increasing and the gini coefficient represents the inequality of income and consumption is increasing. Moreover, in recent years, the level of relative poverty, considered the "threshold of the risk of falling into poverty", is increasing, and since the impact of inflation on the poverty level is large, the international poverty lines are changing, which increases the level of poverty. Considering the existing inequality as the biggest obstacles to reducing poverty we think that the programs and measures aimed at eliminating inequality should be reviewed first.*